ՀԵՏԱՔՐՔՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀՐԱՎԵՐ (ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ – ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ)

Հայաստանի Հանրապետություն
«Շինարարական թույլտվություններ ձեռք բերելու համար էլեկտրոնային ընթացակարգի և մեկ պատուհանի» TF012782 դրամաշնորհային ծրագիր
ԴՐԱՄԱՇՆՈՐՀ՝ No. TF No. 012782

Խորհրդատվական ծառայության անվանումը՝ Հասցեների միասնական էլեկտրոնային գրանցամատյանի մշակում

Փաթեթի համարը (համաձայն գնումների պլանի)՝ EPCP- C-1.2

Հայաստանի Հանրապետությունը Համաշխարհային բանկի Ինստիտուցիոնալ զարգացման հիմնադրամից (ԻԶՀ) ստացել է դրամաշնորհ «Շինարարական թույլտվություններ ձեռք բերելու համար էլեկտրոնային ընթացակարգի և մեկ պատուհանի» TF012782 դրամաշնորհային ծրագիր և մտադիր է այդ միջոցների մի մասն օգտագործել խորհրդատվական ծառայությունների մատուցման դիմաց:

Հասցեների էլեկտրոնային միասնական գրանցամատյանի ստեղծման նպատակն է մեկ միասնական էլեկտրոնային շտեմարանում միավորել ՀՀ բնակչության պետական ռեգիստրում, ՀՀ անշարժ գույքի կադաստրում եւ Հայփոստ ՊՓԲԸ-ում գրառված բոլոր հասցեները, համադրել, ձեւափոխել միասնական ձեւաչափի եւ լրացնել պակասող հասցեները՝ դրանց ձեռքով մուտքագրման միջոցով: Մշակվող շտեմարանը պետք է նախատեսի ապագա ինտեգրում աշխարհագրական տեղեկատվական համակարգին:

Ստեղծվող համակարգի մատչելիությունը լինելու է հանրային կայքէջի տեսքով եւ այն հանդիսանալու է ՀՀ պետական կառավարման եւ մասնավոր ոլորտի համակարգերի համար հասցեների վերաբերյալ իրական ժամանակում տեղեկատվություն ստանալու աղբյուր, որն ունակ պետք է լինի տեղեկատվություն տրամադրել, թե՛ մեկ հասցեի, թե՛ ՀՀ բոլոր հասցեների վերաբերյալ՝ տվյալների փոխանակման ժամանակակից արձանագրությունների միջոցով:

Առաջադրանքով նախատեսվում է հիմնվելով ՀՀ տարածքային բաժանման գործող դասակարգչին մշակել եւ ներդնել ՀՀ հասցեների առցանց, միասնական էլեկտրոնային գրանցամատյան համակարգ, որը կապահովի ՀՀ հասցեների միաս-

նական ձեւաչափով եւ ամբողջական ծավալով պահպանումը, ավելացումը եւ փոփոխությունները:

Առաջադրանքի կատարման ժամանակահատվածն է մոտավորապես 6 ամիս է:

ՀՀ կառավարության աշխատակազմն եւ ՀՀ ֆինանսների նախարարության «Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն» ՊՀ համապատասխան որակավորում ունեցող Խորհրդատվական ընկերություններին (այսուհետ՝ Խորհրդատուներ) հրավիրում են ներկայացնել Ծառայությունների մատուցման հետաքրքրվածության հայտ: Հետաքրքրված խորհրդատուները պետք է տրամադրեն տեղեկություններ՝ ցույց տալով, որ վերոնշյալ Ծառայությունների մատուցման համար իրենք ունեն պահանջվող որակավորումներ և համապատասխան փորձ:

Կարճ ցուցակում ներգրավման (shortlisting) չափանիշներն են.

- Ծրագրային ապահովման մշակման առնվազն 3 տարվա մասնագիտացում,
- Առցանց էլ-կառավարման համակարգերի մշակման առնվազն 3 տարվա փորձ, հատկապես պետական միասնական գրանցամատյանների ստեղծման ոլորտում,
- Հայաստանում կամ ԱՊՀ երկրներում էլ. կառավարման համակարգի մշակման առնվազն մեկ հաջող փորձ:

Հետաքրքրված խորհրդատուներին խնդրում ենք հատուկ ուշադրություն դարձնել Համաշխարհային Բանկի հունվարի 11-ի «Ուղեցույցի՝ ՎԶՄԲ փոխառությունների եւ ՄԶԱ վարկերի և դրամաշնորհների շրջանակներում Համաշխարհային Բանկի Փոխառուների կողմից Խորհրդատուների ընտրություն եւ աշխատանքի ընդունում» պարբերություն 1.9-ին (Խորհրդատուների ուղեցույց), որտեղ շարադրված է Համաշխարհային Բանկի քաղաքականությունը շահերի բախման վերաբերյալ:

Խորհրդատուները կարող են միավորվել այլ ընկերությունների հետ համատեղ ձեռնարկությունների տեսքով կամ որպես ենթախորհրդատուներ՝ իրենց որակավորումը բարելավելու համար:

Խորհրդատվական ընկերության ընտրությունը կիրականացվի համաձայն 2011թ-ի հունվարին հրատարակված (Համաշխարհային Բանկի «Ուղեցույց՝ ՎԶՄԲ փոխառությունների եւ ՄԶԳ վարկերի եւ դրամաշնորհների շրջանակներում Համաշխարհային Բանկի Փոխառուների կողմից Խորհրդատուների ընտրություն եւ աշխատանքի ընդունում») ՀԲ Ուղեցույցների՝ ՀԲ վարկառուների կողմից խորհրդատուների ընտրություն եւ վարձում, շրջանակներում սահմանված Բաժին II-

ում ներկայացված «Որակի եւ արժեքի վրա հիմնված ընտրության» ընթացակարգերի համաձայն:

Հավելյալ տեղեկությունների համար դիմել ստորև ներկայացված հասցեով աշխատանքային ժամերին՝ 09:00-ից - 18:00:

Հետաքրքրվածության հայտերը պետք է ներկայացվեն ստորև ներկայացվող հասցեով (անձամբ, կամ փոստով, կամ ֆաքսով, կամ էլ-փոստով) մինչեւ 2015 թ.-ի հունիսի 10-ը, ժամը 18:00:

ՀՀ ֆինանսների նախարարության
«Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն» ՊՀ
Գործադիր տնօրեն
պրն. Էդգար Ավետյանին
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան 0010, Տիգրան Մեծի 4,

Երեւան, ՀՀ
Հեռ՝ (374-10) 52 34 71, (374-11) 910 581
Ֆաքս՝ (374-10) 54 57 08
Էլ-փոստ՝ info@ffpmc.am